

նակէ « գործոյն մէջ շահ ունեցող » և կամ « գործոյն պատկանող կողմերը », մինչդեռ հայերէնի մէջ « հետաքրքրուած » բառը բնաւ այդպիսի շահու կամ պատկանողութեան իմաստ մը չէ ունեցած և չ'ունի. խեղճ Մշակը տեսնելով որ intéressant բառը կ'նշանակէ « հետաքրքրական », կարծեր է որ intéresser բառն ևս « հետաքրքրուիլ » եթէ թարգմանէլու թարգմանութիւն մ'ըրած կլինի, մինչդեռ ըրածը զուտ բարբարիկութիւն (barbarisme) մ' է. Ստուգիւ եթէ Մշակ Թարգմանչաց օրերը ծնած լինէր, իւր այս հրաշալի թարգմանութիւններովն Պորիւնն ալ պիտի գերազանցէր՝ Ազգարն ալ:

Մշակ իւր ԿԳ թիւ թերթին մէջ ևս, Պոզը գիւղի գործակալէն առ Թիֆլիսի կոնսիստորիայն ղրկուած վիճակային արդեանց մի մասն կեղծանուն մի անձի ձեռք անցած լինելու գէպքն յիշատակելու առ թիւր կ'յարէ իրրեւ եղբակացութիւնն:

« Ահա ի՞նչպիսի բաներ կարող են պատահել արթուն աւազ-
 « նորդի պակասութեան պատճառով: »

Անցեալներն Թայլան քաղաքի մաքսատան մէջ ևս ահագին քանակութեամբ գողութեան և նենգութեանց գէպքեր երեան ելնելով, այժմ քննութեան ներքե է գործը, Մշակ եթէ ըստ իւր սկզբան՝ հայ եկեղեցական մի խայթած լինելու նպատակաւ չէ գրած իւր այդ վերջին տողը, եթէ անկեղծ համոզմամբ է գրած, եթէ քաջ է, եթէ վատ չէ, կարող է իւր այդ միևնոյն եղբակացութիւնը՝ Թայլանի մաքսատան նենգութեան գէպքին համար էլ ասել:

Արդար և անննգ լինինք, Անիրաւութիւնն արդարեւ կ'վնասէ այլոց՝ բայց զմեզ ևս չօգտեցներ:

ԲԱՆԱԳԱՏՆ:

ՆԿԱՐԱԳԻՐ ՀԱԿԱՌԱԿԱՍԻՐԻ.

Հակառակասէրն իւր տխուր ու սեւամազձ կերպարանքով ցոյց է տալիս իւր բնութեան — հոգւոյ դաժանութիւնն որ այլանդակ մարմնոյ մէջ փակուած մի կատաղի գամբոսի նման՝ ծամրտելով իւր տոն խզում ու վազում է մինչև իսկ իւր պահապան տիրոջ վերայ, բնաւին չմտաբերելով իւր ցեղի հաւատարմութիւնն, հակառակասիրութեան կատաղութիւնն արդէն մոռացրել է նորան ինչ որ իւր ևսութեանն է դպչում:

Ատարեալ իժ է հակառակասէրն, ճարտար թովչի ձայն և դեզ չէ ուղում լսել և ստանալ, լեզուի ձայրը կրում է զանութիւն, և աղաչաւոր խարէութիւն, սուր ատամներով խայթում է և ընդերից կաթեցնում սպանիչ թոյներ:

Բրուի նմանութիւն ունի, բուրում է ժահահոտութիւն, որով ատելի ու զղուելի է այն ամենին, որ ունին սուր հոտառութիւն. բազէ է, սրի

ներկայութիւնն անմեղ թռչնոց երամներ է ցրուում. այսպէս ահա հակառակասէրն իւր այլանդակութեամբ կրում է ամեն վնասակար կենդանեաց նմանութիւններն և կատարեալ կենտաւրոս է:

Հակառակասիրի ձայնը մի խանգարուած լարի է նմանում, որ կարող է խանգարել քաղցրահնչիւն քնարի բոլոր թելերի ներդաշնակութիւնն. ինչ խաղաղ ընկերութեան մէջ մուտ գործէ, ինչ հաշտ ու սիրալիր ընտանեաց այցելէ, խոսովութիւն և բաժանում կը ձգէ նոցա մէջ, վասն զի ատելութիւնն է նորա նշանաբանը:

Հակառակասէրն ուրանում է ճշմարտութիւն, հաստատում է ստութիւն իրրև ճշմարիտ, ինչ որ ստորասեն՝ կը բացասէ և ինչ որ բացասեն՝ կ'ստորասէ, ինչ որ գովեն՝ կը պարսաւէ և ինչ որ պարսաւեն՝ կը գովէ ու կը պաշտպանէ բոլոր ջանքով. զորօրինակ եթէ ասես լաւ է մեռանել հայրենեաց համար, նա ուրախութեամբ կը պնդէ թէ « աւելի լաւ է աղբիլ հայրենեաց համար, եթէ ասես թէ « գեղեցիկ է », կպատասխանէ թէ « հոգին տգեղ է », թէ ասես « տգեղ է », կը պատասխանէ թէ « բնութեան պակասութիւնն արուեստով լցրած է », վերջապէս բաց ի հակառակելուց ուրիշ ոչինչ չգիտէ և չի ուզում խօսել:

Մարդկան որ և իցէ բարեգործութիւն նա համարում է « մոլութիւն և անգիտակցութիւն », հասարակաց կեանք վարողին կոչում է « հնասէր, հնամուլ և սամիկ », բարձրագոյն գասակարգին անուանում է « նմանող կապիկ », փեւրազարդ ագռաւ և ոսկերարձ գրաստ « համեստ բարերարին կոչում է « անամպ անձրև », իսկ յայտնի օժանդակին անուանում է « փառասէր փարիսեցի, կամ անգիտակցաբար ողորմած և անխորհուրդ մնսող »:

Հակառակասէրն երբ հրապարակաւ խայտառակուի իրրև ստախօս, խկոյն և եթ փոխանակ բառի կամ փաստի զիմելու, վազում է դէպ ի գործ - խօսքին գործքով պատասխանելու, լեզուի դէմ սուր հանելու, մենամարտութեան հրաւիրելով կամ քաղաքական ատեանով վրէժխնդրութիւն պահանջելու. վերջապէս կատարեալ կարիճ է հակառակասէրն. սիրում է ազատ ման գալ ուր որ կամի, մի փոքրիկ ընդգիմահար պատահելուն՝ իսկոյն զարնում է խայթիչ և թունալի պոչով: Այլ լսելու համար ականջ ունի, թո՛ղ լսէ:

Ս. ԳՆՈՒՆԻ.